



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

09 հունվարի 2020 թվականի թիվ 1-Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՀՆԵՐԳԸ ԱՄԱՆՈՐԻ ԳԻՇԵՐԸ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՉՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության օրհներգը **ԱՄԱՆՈՐԻ ԳԻՇԵՐԸ** հեռուստառադիոընկերությունների կողմից չհեռարձակելու հարցը՝ *պարզեց*.

Զանգվածային լրատվության միջոցներում և համացանցում բուռն քննարկումների առիթ էր հանդիսացել Հայաստանի Հանրապետության օրհներգը հեռուստառադիոընկերությունների կողմից Ամանորի գիշերը չհեռարձակելու հարցը:

Տեղեկատվական տարբեր հարթակներում մի քանի օր շարունակ քննարկվում է, թե Ամանորի գիշերը՝ Հրապարակի ժամացույցի զարկերից հետո հեռուստառադիոընկերությունների կողմից ինչու ՀՀ պետական օրհներգը չի հնչել, դրանով իսկ խախտելով օրենքի պահանջը:

Առաջին անգամ Հայաստանի Հանրապետության վարչապետի ուղերձը Ամանորյա գիշերը ուղիղ հեռարձակմամբ է եթեր հեռարձակվել, որից հետո Երևան քաղաքի Հանրապետության հրապարակի ժամացույցի զարկերից հետո Հայաստանի Հանրապետության օրհներգը չի հնչել, որը հաստատում է նաև Հանձնաժողովի կողմից իրականացված թվով 8՝ «Արմենիա», «Արմնյուզ», «Ա-TV», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Նոր Հայաստան», «5-րդ ալիք», «Շանթ» հեռուստաընկերությունների եթերի մշտադիտարկման արդյունքները:

«Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետը սահմանում է.

Հայաստանի Հանրապետության օրհներգը հեռարձակվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից՝ անկախ սեփականության ձևից՝

գ) Ամանորի գիշերը՝ Երևան քաղաքի Հանրապետության հրապարակի ժամացույցի զարկերից հետո:

«Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է՝ սույն օրենքի պահանջների խախտումը առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխում կարգավորված է իրավախախտումներ կատարած անձի պատասխանատվությունը հեռուստատեսության և ռադիոյի օրենսդրության պահանջները խախտելու համար:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի 58-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ Հանձնաժողովի կողմից հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք:

Նույն գլխի 60-րդ հոդվածը սահմանում է, թե որ իրավախախտման համար, ինչ տուգանք է կիրառվում, սակայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով Ամանորի գիշերը՝ Երևան քաղաքի Հանրապետության հրապարակի ժամացույցի զարկերից հետո Հայաստանի Հանրապետության օրհներգը չհեռարձակելու համար տուգանք նախատեսված չէ: Ստացվում է, որ «Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված է, որ սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն, թե իսկ որ օրենքով սահմանված կարգով և որ մարմինն է լիազորված այն կատարելու նշված չէ, այսինքն կա օրենսդրական անորոշակիություն:

Հանձնաժողովը հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում վերահսկողություն իրականացնող պետական մարմին է և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված իր լիազորություններն իրականացնում է ղեկավարվելով հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորող օրենսդրությամբ:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, տեղեկատվության բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է. Հանձնաժողովը՝

14) «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի խախտման կամ լիցենզիայի պայմանները կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով:»

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը սահմանում է.

«Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը:»

Այսպիսով, փաստերի ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ տեղի է ունեցել «Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» ՀՀ օրենքի խախտում, սակայն ղեկավարվելով հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորող օրենսդրությամբ Հանձնաժողովն իրավասու չէ կիրառել պատասխանատվության միջոցներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով, 36-րդ հոդվածով, 44-րդ հոդվածի 1-ին մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Վարչական վարույթ չհարուցել:
2. Դիմել հեռուստառադիոընկերություններին՝ «Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված դրույթները պահպանելու պահանջով:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

09 հունվարի 2020թ.

ք. Երևան